



U P U P U S

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԵԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱ-
ՎԼՐՖԱԿԱՆ եւ ԱԶԴԱՑԻՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Ա Յ Ի Ւ Թ Ե Ւ Տ Ե Ր Ա Ր Ե Ր Ա Ր Ե Ր Ա

ՀԱՅՈՒԹ Հ Կ Ա Գ Ե Բ Ո Ւ Գ

ՄԱՅԻՍ 1895 թ.

ԿՐՈՆԱԿԱՆ—ԸՆԹԱՅԻՆ

ԿՈՏՈՐԵԱԼ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ.

• Զի դուք յազատութիւն
կոչեցեալ էք, եղբարց, մե-
այն զի ազատութիւնն ծեր
ոչ վխիցի ի պատճառ
մարմույ, այլ սիրով ծառա-
լիօն միմիանց :

9mpt. v. 43:

Անցան առաջուայ ժամա-
նակները, ազատու-
թիւն է այժմ այդ-
պիսի բաներ ել ով է
հարցնում: — այս և
սորա նման խօսքեր
այսօր ամէն քայլափո-
խում կարելի է լսել մեր ժողովրդի բերնից:

Եւ իրան, ինչքան փոխուել են ժամանակ-ները ինչքան աւելի ազատութիւն կայ այ-ժըս քան մի 20—30—100 տարի առաջ էր. տղամարդն այլ ևս աշ ու դողով չէ հանդը դուրս գալիս ամէն մի սինքոր թուրքի առաջ կուչ կուչ լինում: Կնիկ մարդիկ եօթը տակ քօղով երեսը չեն ծածկում տաննեակ տարի-ներ չխօսկան մնում: որդին հօր առաջ հզու ծառայի պէս ձեռքերը խաչած չի կանգնում: նորա հրամաններին սպասում: աղջիկը չի ըս-պասում: որ ծնողները օրին մէկ օրը իւր թեյից բռնեն: առաջին պատահած մարդուն տան: Հին հին կարգերն ու սովորութիւններն ել ոչ ոք սուրբ սուրբ չէ պահում: առանց նո-ցա լաւն ու վատը օգուտն ու վնասը քննե-լու: ամէն մի տէրտէրի խօսք հալած իւղի տեղ չէ ընդունում: ճշգութեամբ կատա-րում: ազատութիւն է ամէն տեղ ու ամէն

բանի մէջ: Խայց գուցէ ոչ մի մարդ այս նոր սերունդից՝ մեր ուսումն առած տղաներից, մաքով չէ անցնում: Որ այսպիսի և սորանից շատ աւելի մեծ մի ազատութիւն աշխարհի մէջ մտաւ, երբ առաջին անգամ ու աւետարանի քարոզը հնչեց, երբ Պօղոս առաքեալի պէս մարդիկ քաղաքէ քաղաք, երկրէ երկիր ընկած կանչում ու եկեղեցու յարկի տակ էին ժողովում հեթանոս ժողովուրդներին. եկէք, «յազատութիւն կոչեցեալ էք», «ազատութեամբն, որով Քրիստոս զմեզ ազատեցոյց»: Այստեղ էլ ազատ են ամէնքը, ազատ է հրէայն օրէնքի իւրաքանչիւր տառը, փարիսեցիական մանրակիւտ աւանդութիւնները խստիւ պահելուց, ազատ է յոյնը սրտի վերայ ծանրացող նախապաշտումներից, սահմարձակ մոքի թեւլագրած յուսահատական կամածանդներից, ազատ է բոլոր աշխարհը հոգեոր ստրկութիւնից, անշունչ տարրերին երկրագութիւն մատուցանելուց: Արտաքին միջոցներով, զէնքի զօրութեամբ չէր ձեռք բերուած այս ազատութիւնը. Երբ իմ ծշմարիտ աշակերտները լինեք, ասել էր Քրիստոս, «ծանիջիք զծշմարտութիւնն և ծշմարտութիւնն ազատեցէ ըզձեղ» (Յովհ. 8. 32). և նա՝ այդ ազատարար ծշմարտութիւնը աշխարհի վերայ քարոզելուց յետոյ, ուղարկեց աշխարհ Շշմարտութեան Հողին, որ ամէն մի աշակերտի, ամէն մի ծշմարիտ քրիստոնէի սրտի մէջ ընակութիւն հաստատելով՝ պէտք է տուաջնորդէր նոցա ամենայն ծշմարտութեամբ և ազատէր նոցա խաւարի և մոլութեան կապանքներից (Յովհ. Ժ. 17 և Ժ. Օ. 13): Ա. Հոգւով զօրացած տղէտ ձկնորսներ, մեղքի նշաւակ մի մաքսաւոր, օրէնքի լուծի տակ հեծող մի փարիսեցի՝ ազատ զգացին իրենց, ամէն վտանգ արհամարհելով և ամէն արգելքի յաղթելով ճշշմարտութեան խօսքը աշխարհի առաջ քարոզելու, և ամէն անգամ, երբ ս. Հոգւով զգացուած տօնուում է ու եկեղեցւոյ մէջ, վկայուում է այս տօնը և զգալ տալիս մեզ թէ զեռ կենդանի է ճշշմարտութեան հոգին և կարող ազատարար ծշմարտութիւնը մեզ պարզեց եթէ

միայն մենք Քրիստոսի ծշմարիտ աշակերտներ ենք, արամազիր ըմբռնելու և զնահատելու իսկական ծշմարտութիւնը, իսկական ազատութիւնը:

Սակայն ինչպէս երկդիմի է այս ազատութիւն խօսքը քանի թիւրիմացութեանց և գայթակղութիւնների առիթ: Քրիստոնէութիւնը մի հոգեոր ազատութիւն էր բերել. «Օ.ի Տէր հոգին է, ուր հոգի Տեառն է, անդ ազատութիւն է» (Ը. Կորնթ. Գ. 17). այս պատճառով նա ոչ մի խտրութիւն չէ զբնում արտաքին կերպով ազատ կոչուածի և սարուկի մէջ, ամէն ոք, որ ծշմարտութիւնը ձանաշէլ է՝ ազատ է ներքնապէս, թէկուզ նա աշխարհի վերայ ամենաստոր ծառայութեան մէջ լինի. «զի որի ի Տէր կոչեցեալ իցէ ծառայն, ազատ Տեառն է» (Ը. Կորնթ. Լ. 21). մինչգեռ ընդհակառակն՝ «ամենայն», որ առնէ ըզմեզո՝ ծառայ է մեղաց» (Յովհ. Ռ. 34). թէկուզ նա երկրագնափի տէրն ու կառավարիչը լինի: Այսու ամենայնիւ նոյն իսկ ազատութեան ջատագով Պօղոս առաքեալը ստիպուած էր ամրողջ կեանքում կոիւ վարել այնպիսինների գէմ: որոնք իւր քարոզած հոգեոր ազատութեան օրէնքը ամենաթիւր բացատրութիւնների առարկայ էին գարձնում: Ազատուելով մովսիսական օրէնքի կամ հեթանոսական նախապաշտումների բռնութեան լուծից՝ մարդիկ ազատ էին համարում իրենց առ հասարակ ամէն օրէնքի, նաև բարոյական օրէնքի առաջ. երեսանց միայն ըմբռնելով քրիստոնէական ծշմարտութիւնը՝ նոքա ազատութիւնն էլ արտաքին բաների մէջ էին տեսնում՝ իրենց մարմնական ցանկութիւններին և կրթերին էին ազատութիւն տալիս. հանդէս էին զալիս մարդիկ, որոնք այլոց «ազատութիւն խօստանան և ինքեանք ազականութեանն ծառայք են» (Ը. Պետ. Ղ. 19): Եւ աչա առաքեալը բարձրացնուում է իւր ազգարար ձայնը. Ազատ էք զուք արդարեւ ունիք այդպիսով մի բարիք, որ անչափ բարձր պիտի զնահատէք, առանց որի ոչ մի ինքնուրոյն բարոյական կեանք զարգանալ չէ կարող, սիրեցէք և պինդ պահե-

ցեք այդ ազատութիւնը, «միայն զի ազա-
տութիւնն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմ-
նոյ, այլ սիրով ծառայեցէք միմևանց»։ Այս,
արտաքոյ կարդի մի բան է քրիստոնէական
ազատութիւնը ճշմարիտ ազատութիւնը. նո-
րա հետ մի նոր ծառայութիւն կապուած է
անհրաժեշտարար, զի որ ազատն կոչեցեալ է,
ծառայ Քրիստոսի է։ քրիստոնէի ազատու-
թիւնը նորա համար չէ, որ մարմինը գորանից
երես առնի, սանձարձակ կերպով իւր կրքերին
հետամուտ լինի, մեղկացնէ, ստրկացնէ հոգին.
այլ նորա համար, որ ազատ լինի հոգեւորը,
հոգւոյ բարձրագոյն առաքինութիւն սէրը,
մարմնականն ու աշխահայինը կեանքի վումա-
գոյն նպատակին ծառայեցնելով, եսական ձրգու-
մամբ իրարից բաժանուած, մեզի գերի մար-
գոց ի մի բերելով սիրոյ հաշտարար օրէնքի
ներքոյ ազատ հոգեւոր համայնք ստեղծելով.
Քրանքի ազատ էի յամենայնէ, և ամենեցուն
զանձն ի ծառայութիւն կացուցի, զի զբազու-
մբս շահեցայց» (Ը. Առնթ. Թա. 19)։

Խսկ այսօր. ինչպէս ենք ըմբռնում, ինչ-
պէս գործադրում մեր թանգ գնով ձեռք
բերուած ազատութիւնը։ Առաքելական հայ-
րերից մէկը պատմումէ, թէ Փրկիչը մի ան-
գամ շարաթ օրը արտերով անցնելիս տես-
նումէ մի մարդու, որ օրէնքի պատուէրի
հակառակ աշխատումէր, և ասումէ, նորան.
«Դժէ զիտես ի՞նչ է քո արածը, երանելի ես
այն ժամանակ. ազա թէ ոչ՝ վաց քեզ օրի-
նազանց»։ Դժէ զիտես, որ մարդը ազատ է
և պէտք է աշխատէ շարաթ օրն էլ օդտա-
կար կերպով մի բարի նպատակի համար գործ
գնել՝ արդար է արածդ. իսկ եթէ դեռ օ-
րէնքի լուծի տակ ես և միայն քո անձնական
շահի համար, կամ յանդուզն հակառակու-
թեան հոգւով օրէնքի պատուէրը չես կատա-
րում՝ ամենայն պատժի արժանի պիտի հա-
մարուիս։ Կ՞նչ պէտք է պատասխանէր ար-
դեօք մեր ներկայ սերունդը, եթէ այս նոյն
հարցը իւր առաջ զրուէր։ Ազատութեան,
ճշմարիտ, ներքին, հոգեւոր ազատութեան ար-
դիւնքն է միթէ, որ նա այնպէս շուտ սովո-

րեց արհամարդէլ հին հրն կարդերն ու սովորու-
թիւնները, նուիրական գարձած հին հրն ծէ-
սերն ու արարողութիւնները։ Ազատութեան
զգացումից է միթէ, որ յետին սահիկանի մըտ-
րակի առաջ գողացող ամենաչնչին շահի հա-
մար կարողութեան տէր մէկի սաները լիզող
մարդիկ այնպիսի անկուր յանդգնութեամբ են
վերաբերուում գէպի բարյատկան բարձր հեղի-
նակութիւնները, ոտի տակ տալիս ամէն սրբու-
թիւն։ Ազատ մաքի անհրաժեշտ պահանջն է
միթէ, որ զրի սկն ու սպիտակը չճանացող
տղաներ հրապարակ են ելնում։ զիտութեան
անունով մէծարանում, լուսաւորութեան, յա-
ռաջադիմութեան ճանապարհը ցոյց տալիս
որ իրենց պատիւը ծախած, ամենքին յայտ-
նի խարեւաներ մըտում և անարգումեն ա-
ներկիւղ ում կամենան. ստում և շողոքոր-
թում են անզուսազ բերնով և զրչով առանց
կարմրելու, առանց քաշուելու հասարակաց
զատատանից։ — Ուսենում է ուսումնական
տարուայ վերջը, և բազմաթիւ հայ պատանիք
կեանքի մի նոր շրջան ոտ պիտի կոխեն. ինչ-
պիսի մընոլորտ է սպասում նոցա ինչպիսի
ազատութիւն, մէնք զուցէ աւելի լաւ բան նո-
ցա ցանկանալ չենք կարող, քան բարեմազթեր
որ Եղուսաղէմի վերնատան յայտնուած Շըշ-
մարտութեան Հոգին առաջնորդէ և նոցա ամե-
նայն ճշմարտութեամբ. բանայ նոցա աչքերը,
ուղիղը մխալից, աղնիւն անարդից տար-
բերելու, առջեւ բացուած խոր անդունդը տես-
նելու, ազատ պահէ նոցա կերպ կերպ նա-
խապաշտումներից, հոգին մընացող մոլեռան-
դութիւնից. զօրավիզն և ուղեցոյց լինի փոր-
ձանքի և նեղութեան մէջ, արթուն ազդարար
մոլորութեան շաւզի վերայ։ — Ճշմարտութեան
հետամուտ, լուսաւորութեան անունով ոգեսոր-
ուող ուսումնածարաւ հայ մանուկներ, թող
կենդանի մնայ միշտ ձեր վառ սրտերում ան-
յագ այդ տենչը գէպի անպղտոր մի ճշմար-
տութիւն՝ և ծանիջիք զճշմարտութիւնն, և
ճշմարտութիւնն ազատեցէ զձեզ։